ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐ ՈՒՐՈՒՅՆ ՈՒՂԻՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ. ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Իմ առաջին հանդիպումը Դավիթ Հովհաննիսյանի հետ 1998-ին էր, երբ ես 3-րդ կուրսի ուսանող էի և ասացին, որ մեզ դասավանդելու է Սիրիայում Հայաստանի Հանրապետության նախկին դեսպանը, ով նոր էր վերադարձել դիվանագիտական ծառայությունից: Եվ, քանի որ շատ էինք լսել, թե արևելագիտությունը նաև հայկական դիվանագիտության դարբնոցն է, հանդիպումը դիվանագետ-արևելագետի հետ ինքնին հետաքրքիր էր: Դավիթ Հովհաննիսյանը մեզ դասավանդում էր իսլամի պատմություն և խոստովանեմ, որ բավական բարդ էր, քանի որ հանձնարարվող գրքերը և դասախոսությունն ինքնին ենթադրում էին որոշակի իմացությունների բազա, որը պետք էր համալրել ինտենսիվ ընթերցանությամբ: Հիմա կդժվարանամ ասել, թե արդյոք մենք հասցրեցինք լրացնել պարտադիր ընթերցանության ենթակա գրքերի պակասը, կամ արդյոք Հովհաննիսյանը գոհ մնաց տարեվերջյան մեր պատասխաններից (գրեթե վստահ եմ որ՝ ոչ), սակայն այդ դասընթացը կոնկրետ ինձ մոտ ձևավորեց արևելագիտական և ընդհանուր մասնագիտական գրքեր կարդալու որոշակի պատասխանատվություն, որը հետագայում և մինչ օրս ինձ ուղեկցում է:

Դավիթ Հովհաննիսյանի հետ շփման երկրորդ փուլն արդեն ավագ և կրտսեր դասախոս-արևելագետ գործընկերների շփում էր, կարծիքների փոխանակում, վերլուծությունների քննարկումներ, որոնց համախմբին նա պայմանական և փոքր-ինչ հումորով անվանում է «գյալաջի»: Ենթադրում եմ, որ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նրան էլ է հետաքրքիր կրտսեր կամ տարբեր տարիքային

խմբերի գործընկերների կարծիքները, մոտեցումները, ինչը վստահաբար փոխադարձորեն օգտակար է: Առավել հետաքրքիր է նեղ մասնագիտական՝ արևելագիտական թեմաների շուրջ քննարկումները, նրա լայն գիտելիքների վրա հիմնված կարծիքի, խորհրդի ունկնդրելը:

Պետք է հատուկ նշել, որ Դավիթ Հովհաննիսյանն իր ուրույն և անուրանալի տեղն ունի Հայաստանում արաբագիտության զարգացման գործում և նա է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի հիմնադիր-վարիչը: Հայկական արևելագիտությունը հարուստ և գեղեցիկ է իր գույներով, իր կարծիքների, դպրոցների տարբերությամբ, բայց և համադրելիությամբ, իսկ այդ ամենի գերնպատակը հայկական պետականությանը ծառայելն է: Դավիթ Հովհաննիսյանը հայկական արևելագիտության մեջ ունի իր դպրոցը, ոլորտում գործող իր սաներից բաղկացած դպրոցը և իհարկե ունի իր ոճն ու ուղին արևելագիտության մեջ: Ես նկատել եմ, որ նրա սաները իրենց վրա ակնհայտորեն կրում են պրոֆեսոր Հովհաննիսյանի գիտական և մանկավարժական ոճերի ազդեցությունը, որը դրսևորվում նրանց բանավոր և գրավոր խոսքում ևս. սա արդեն խոսում է դպրոցի կայացած լինելու և շարունակվելու պոտենցիալի մասին:

Պրոֆեսոր Հովհաննիսյանը իր դասախոսությունները գրեթե միշտ ամփոփում է ունկնդիրներին ասելով «երջանկություն եմ մաղթում» և ես նրա 70-ամյա հոբելյանը շնորհավորելով՝ ուզում եմ նրան անկեղծորեն երջանկության շարունակություն մաղթել, քանի որ նա արդեն իսկ երջանիկ մարդ է, ով սիրված և գնահատված է ընտանիքում, կոլեկտիվում, ընկերական շրջապատում:

Ռուբեն Մելքոնյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր